Արձանագրություն N 4

Առողջապահության նախարարության 2020 թվականի կարիքների համար անհրաժեշտ հեռախոսակապի ծառայությունների ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2020/3» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան	«22» «Նոյեմբեր» 2019թ. ժամը 16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ	Ա. Մուրադյան, Օ. Մինասյան
Հանձնաժողովի քարտուղար	Հ.Սարգսյան

Բացակայում էր՝ Մ. Մխիթարյանը

1. Հայաստանի Հանրապետության ՊԵԿ հարցում ներկայացնելու մասին

(Ա. Մուրադյան)

Համաձայն ՀՀ ՊԵԿ-ի կողմից 19.11.19թ. ստացված հարցման պատասխանի «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն հայտերի ներկայացման օրվա դրությամբ՝ 06.11.19թ. ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 413,451 ՀՀ դրամ: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 47-րդ և հրավերի 7.18 և 7.19 կետերը «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ -ին առաջարկվել էր շտկել անհամապատասխանությունը և վճարել ժամկետանց պարտավորությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 22.11.2019թ.) և վճարումը հավաստող փաստաթղթի սկանավորված տարբերակը ուղարկել գնման ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային հասցեին: «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է վճարումը հավաստող վճարման հանձնարարագրի և հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի պատճենները (կցվում են), ըստ որոնց վերոնշյալ ժամկետանց պարտավորությունը վճարվել է: Ուստի համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 48-րդ կետի «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի հայտը գնահատվել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

2. Ընթացակարգի ամփոփման մասին

(Ա. Մուրադյան)

1. Հիմք ընդունելով մասնակցի կողմից ներկայացված հայտը և պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը.

Որոշվեց «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2020/3» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել և հաղթող ճանաչել.

- «ՄՏՍ Հայաստան» ՍՊԸ-ն՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով՝ 9,756,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

✓ 2.Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը, **որոշվեց** «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2020/3» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ չսահմանել, քանի որ հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից:

Հանձնաժողովի

Անդամներ՝ ---------- Ա. Մուրադյան

---------- Օ. Մինասյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան